ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 783-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը՝ 11:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-28/ թափուր պաշտոնի մրցույթ:

2. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը՝ 12:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-11/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը՝ 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-45/ թափուր պաշտոնի մրցույթ:

4.2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը՝ 15:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-13/ թափուր պաշտոնի մրցույթ:

5. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը՝ 16:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, սպասարկման բաժնի երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-3/ թափուր պաշտոնի մրցույթ:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին /Գ. Շառոյանին/, ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:

7. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05
Խոյ համայնք, գ. Գեղակերտ